



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԱՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ 800,000 ՏՈԼԱՐԻ ԲԱՑԱՌԻԿ ԳՈՒՄԱՐ ՄԸ ԿԸ ՏՐԱՄԱԴՐԵ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգային Կարչութիւնը այսու ուրախութեամբ կը յայտարարեն մեր ազնիւ ժողովուրդին, թէ նկատի ունենալով երկրի տնտեսական կացութիւնը եւ անոր հետեւածով մեր Վարժարաններուն դիմագրաւած դժուարութիւններն ու մարտահրաւերները, 800,000 (ութ հարիւր հազար) տոլարի մեծագումար յատկացում մը կը տրամադրուի Թեմիս Ազգային Վարժարաններուն: Այս յատկացումին առաջին բաժինը Ազգ. Վարժարաններուն փոխանցուեցաւ ամանորի նախօրեակին:

Ուրախ ենք յայտնելու, որ այս յատկացումը կարելի դարձաւ՝ շնորհիւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այցելութեան առիթով, ի պատիւ Վեհափառ Հայրապետին կազմակերպուած մեծարանքի ճաշկերոյթին արձանագրուած նուիրատուութեանց եկամուտին: Կ'ուզենք գոհունակութեամբ յայտարարել, թէ այս յատկացումին մեկ մասով, իբրեւ անձեռնմխելի գումար՝ Ազգ. Առաջնորդարանիս մօտ պիտի հաստատուի հիմնադրամ մը, որուն հասոյթը նմանապէս պիտի օգտագործուի ի նպաստ Ազգ. Վարժարաններուն: Վստահ ենք, որ հիմնադրամը պիտի վայելէ մեր բարերարներուն գուրգուրանքը եւ պիտի աճի տարուե տարի:

Այս առիթով, կ'ուզենք մեր ժողովուրդին սեփականութիւնը դարձնել, թէ հովուապետական այցելութեան օրերուն կազմակերպուած հանգանակային ձեռնարկները նիւթական զօրակցութիւն ապահովեցին ևաեւ ի նպաստ Ասթիլիասի Դպրեվանքին, Ազգ. Առաջնորդարանիս եւ մեր Եկեղեցիներուն, յատկապէս Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին, Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եւ Լաս Վեկասի Ս. Կարապետ Եկեղեցիներուն, որուն համար այսու անգամ մը եւս շնորհակալութիւն կը յայտնենք մեր ազնիւ բարերարներուն ու նուիրատուներուն:

ԴԻՒԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԻ

WESTERN PRELACY MAKES A RECORD ALLOCATION OF \$800,000 TO PRELACY SCHOOLS

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council with great joy announce that the Western Prelacy has allocated a record amount of \$800,000 to Prelacy Schools. This allocation serves to alleviate financial concerns of our Schools brought on by global economic conditions. The first portion of this amount was distributed to Prelacy Schools prior to the New Year.

This allocation was made possible by generous donations received at the Pontifical Banquet in honor of His Holiness Catholicos Aram I during the Pontifical Visit of October 2011. We also announce that a fund for our Schools will be established at the Prelacy with a portion of the allocation. We are confident that this fund will grow year by year with the contributions of our faithful community.

We are pleased also that on the occasion of the Pontifical Visit of His Holiness, we were able to secure substantial support for the Catholicosate Seminary, our Prelacy, and our Churches, specifically Holy Cross Cathedral of Montebello, St. Gregory Church of San Francisco, Holy Trinity church of Fresno and St. Garabed Church of Las Vegas, for which we once again thank our sponsors and donors.

WESTERN PRELACY DIVAN